

### ՉՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի  
և քաղաքականության ինստիտուտի քրեական և  
քրեադատավարական իրավունքի ամբիոնի հայցորդ,  
փաստաբան

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՉԵՎԻ ՊԱՐԶԵՑՈՒՄԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տեղեկատվական հասարակության ձևավորումը իր ազդեցությունն է ունենում հասարակական բոլոր հարաբերությունների վրա, այդ թվում նաև՝ քրեադատավարական իրավահարաբերությունների: Դատավարական ձևի պարզեցումը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և լայն կիրառման համատեքստում դառնում է անհրաժեշտություն դատավարական ֆորմալիզմի արմատավորման դեմ պայքարի համար: Սույն գիտական հոդվածի սահմաններում կքննարկվեն տեղեկատվական հասարակությունում քրեադատավարական իրավահարաբերությունների պարզեցման հնարավորությունների վերաբերյալ խնդիրները: Աշխատանքի ծավալի մեջ ներառված է նաև նշված խնդրի վերաբերյալ արտասահմանյան փորձի և հայաստանյան իրավակիրառ պրակտիկայում տեղ գտած միտումների վերլուծություն:

*Հիմնաբառեր – դատավարական ձև, դատավարական ֆորմալիզմ, տեղեկատվական տեխնոլոգիաներ:*

Իրավունքի տեսության մեջ դատավարական ձևը հասկանում են որպես դատավարության մասնակիցների գործողություններին ներկայացվող ընթացակարգային պահանջների համակցություն, որը ուղղված է որոշակի իրավական արդյունք ստանալուն: Այլ կերպ ասած, դատավարական ձևը դա իրավական յուրօրինակ կառուցվածք է, որը մարմնավորում է դատավարական լիազորությունների իրականացման առավել նպատակահարմար ընթացակարգի սկզբունքները: Շարադրվածը կարող է հավակնել բոլոր իրավական գործընթացների համար ունիֆիկացված սահմանում դառնալուն, քանի որ այն պարունակում է քննարկվող հասկացության անհրաժեշտ այն բոլոր տարրերը, որոնք արտահայտում են դրա էությունը:

Դատավարական ձևի հասկացությունը քրեադատավարական գիտության հիմնարար հասկացություններից է, որի մասին խոսելիս վերը շարադրված սահմանումը անհրաժեշտ է լրացնել՝ հաշվի առնելով քրեադատավարական իրավահարաբերությունների յուրահատկությունները:

Խորհրդային դարաշրջանում քրեադատավարական խնդիրներին նվիրված աշխատություններում դատավարական ձևի հիմնական նշանակությունը հաճախակի հավասարեցվում էր հակաիրավական արարք կատարած անձանց նկատմամբ պետական հարկադրանքի կիրառման կանոնակարգմանը<sup>2</sup>:

Դատավարական ձևի հավասարեցումը բացառապես պետական մարմինների իրավասության շրջանակներում դրանց գործունեությանը, հանգեցնում է քրեական դատավարության մասնավոր մասնակիցների գործունեության նկատմամբ դա-

տավարական ձևի կիրառման հնարավորության հերքմանը: Շարադրված մոտեցումը թերևս կարելի է բացատրել խորհրդային դարաշրջանում քրեական վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքների սահմանափակ լինելով:

Կարծում ենք, որ քրեական դատավարության ձևի առավել հաջող բնորոշումներից է Լ.Մ.Լոբոլյուխի կողմից առաջարկվածը, համաձայն որի. «... քրեական դատավարության ձևը՝ քրեական գործով վարույթի, առանձին դատավարական գործողությունների իրականացման և դատավարական որոշումների կայացման օրենքով նախատեսված կարգ է»<sup>3</sup>: Նշված սահմանմանը նման ձևակերպումներ առաջարկվում են նաև այլ դատավարագետների կողմից, որոնք քրեական դատավարության ձևի մասին նշում են՝ դա քրեական գործի հարուցման, քննության և լուծման յուրահատուկ, օրենքով սահմանված դատավարական կարգ է, որը կայանում է՝

- քրեական դատավարության փուլերի սահմանման և քրեական գործի մեկ փուլից մյուսին անցում կատարելու համար նախատեսված պայմանների,
- ամեն առանձին փուլում քրեական վարույթի իրականացման ընդհանուր պայմանների,
- առանձին դատավարական գործողությունների կատարման հիմքերի, պայմանների և կարգի,
- քրեական գործի քննության ընթացքում ընդունվող որոշումների տեսակի, բովանդակության և ձևի սահմանման մեջ<sup>4</sup>:

Հաշվի առնելով դատավարագետների կողմից տրված սահմանումների քանակը և բազմազանությունը՝ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել

www.journal.lawinstitute.am

դրանցում առկա նմանությունները, ընդհանրությունները, որոնք քննարկվող հասկացության սահմանման համար էական նշանակություն ունեցող հատկանիշներն են: Այդպիսի հատկանիշների շարքին են պատկանում՝ վարույթի իրականացման յուրահատուկ կարգը, դրա հստակ իրավակարգավորումը, օրենքով նախատեսված դատավարական գործունեության խնդիրների լուծման ուղղվածությունը<sup>5</sup>:

Քրեական օրենսդրությունը, որը սահմանում է հանցավորության սահմանները և նախատեսում քրեական պատասխանատվություն հանցագործության կատարման համար, կարող է իրացվել բացառապես քրեական դատավարության ձևի շնորհիվ, որը ապահովում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի հանցագործության դեպքի բացահայտման, քննության, ինչպես նաև քրեական գործի լուծման ուղղություններով գործունեության իրականացումը: Որոշ դատավարագետներ գտնում են, որ քննարկվող դատավարության ձևը պետք է լրացնել ևս մեկ էական նշանակություն ունեցող հատկանիշով, այն է՝ դատավարության ձևը պարունակում է նորմատիվ բնույթի պահանջների համակարգ, որը իր հերթին պարունակում է կանոնների համակցություն, որոնք սահմանում են դատավարության բոլոր մասնակիցների գործունեության շրջանակները ու կարգը<sup>6</sup>:

Սակայն, ինչպես իրավագիտորեն նշում է Վ.Մ. Տրոֆիմենկոն՝ անթույլատրելի է նույնացնել դատավարության ձևի և դատավարական ֆորմալիզմի հասկացությունները: Յուրաքանչյուր իրավական գործընթաց կապված է որոշակի ֆորմալ պահանջների հետ, որոնք նպատակ են հետապնդում այդ գործընթացի մասնակիցների համար ապահովել որոշակի երաշխիքներ<sup>7</sup>:

Ըստ Ժ. Բերժեղի դատավարական ֆորմալիզմը, համաչափության պահպանման պայմանին համապատասխանելու դեպքում որակյալ արդարադատության և իրավական կամայականությունից անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք է<sup>8</sup>:

Այնուամենայնիվ, դատավարական ֆորմալիզմի վերաբերյալ առավել տարածված է բացասական վերաբերմունքը, իսկ դատավարագետների կողմից ավելի հաճախ կարելի է լսել դատավարական ֆորմալիզմի սահմանափակման անհրաժեշտության մասին:

Խնդիրը կայանում է նրանում, որ դատավարական գործողությունների կատարման օրենքով նախատեսված կարգը ամբողջովին վերածվում է դատավարական ֆորմալիզմի արտահայտության,

որպես հետևանք դատավարության մասնակիցների կողմից քրեական գործերի ըստ էության քննության և բովանդակային առումով ճշմարտության բացահայտման հարցերին տրվում է երկրորդային նշանակություն, մինչդեռ ֆորմալ պահանջներ պահպանելը դարձվում է առաջնային խնդիր: Այսպես, եթե օրինակ դատավարության մասնակիցը չհետևի օրենքով սահմանված կարգին կամ չպահպանի որևէ գործողության կատարման համար նախատեսված ժամկետը (օրինակ՝ վերաքննիչ բողոքի, որպես վկա հարցաքննելու մասին միջնորդության ներկայացման, փաստաթղթերի պահանջման համար նախատեսված կանոնները), ապա կատարված գործողությունները համարվում են անվավեր, իսկ դատավարության համապատասխան մասնակիցը կրում է այլևս անուղելի վնաս<sup>9</sup>:

Դատավարական ֆորմալիզմի սկզբունքի սահմանափակման վերաբերյալ Մոսկվայի պետական համալսարանի դատավարագետները նշում են, որ ոչ դատավարական, օրինակ՝ ոստիկանական գործունեության ֆորմալացումը (դատավարական օրենսգրքով մանրակրկիտ կարգավորելը՝ հեղ.), նույն ծավալով ինչ դատական գործունեությանը, սկզբունքորեն պարտադիր չէ: Ավելին, քննություն սկսելու մասին որոշում կայացնելիս դատավարական գործունեության ֆորմալացումը կարող է վնասակար լինել, քանի որ դանդաղեցնում է հանցագործության մասին տեղեկությունների ստուգումը և նպաստում է ստուգման գործընթացի բացահայտմանը, ինչը ցանկալի չէ ինչպես ստուգման գործընթացի (քանի որ կարող է օգնել հանցագործին թաքնվել), այնպես էլ մարդու իրավունքների ապահովման տեսանկյունից (քանի որ անմեղները կարող են անհարկի կասկածվել): Ասվածը չի նշանակում սակայն, որ ոստիկանական գործունեությունն ընդհանրապես կարգավորման կարիք չունի: Այսպես, մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է այդ իրավունքների սահմանափակման ընթացակարգի կարգավորում և այդ սահմանափակումների նկատմամբ դատական վերահսկողության սահմանում<sup>10</sup>:

Սամարայի պետական համալսարանի քրեական դատավարության ամբիոնի վարիչ Վ.Ա. Լազերևան նշում է, որ նույնիսկ քննչական գործողությունների ամենամանրակրկիտ կարգավորումը (դատավարական ձևը) ինքնին այն պահպանելու երաշխիք չի հանդիսանում: Դատավարագետը, որպես օրինակ, նշում է, որ ընթերականների ինստիտուտը նախատեսված է որպես քննչական գործողությունների կատարման օրինականության երաշխիք, սակայն հայտնի է, որ օրենքի պահանջն

ամեն օր և ամեն ժամ խախտվում է<sup>11</sup>:

Քննարկելով դատավարական ֆորմալիզմի և ձևի բնույթը տեղեկատվական հասարակության ձևավորման և տեխնիկական միջոցների լայն կիրառման համատեքստում՝ անհրաժեշտ ենք համարում առանձնակի ուշադրություն դարձնել դատավարական գործողությունների իրականացման, դատավարական որոշումների կայացման գործընթացներում տեխնիկական միջոցների օգտագործման հնարավորությանը և միտումներին:

Մարդկությունը արդեն վաղուց մուտք է գործել տեղեկատվական դարաշրջան, իսկ Հայաստանի Հանրապետությունը հռչակել է մոդերնիզացման գործընթացի սկիզբը, որի հիմնական բաղադրիչ է հանդիսանում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը: Այնուամենայնիվ, թրթռյալ քրեական գործը շարունակում է մնալ քրեական դատավարության նյութական սուբստրատ:

Քրեադատավարական փաստաթղթաշրջանառությունը այնպիսի ծավալների է հասնում, որ քրեական գործով մեղադրական եզրակացությունները կալանավորված մեղադրյալների համար համապատասխան քրեակատարողական հիմնարկներ բերվում են բեռնափոխադրող ավտոմեքենաներով, այնուհետև դատարանում դրանք մի քանի օր հրապարակվում են մեղադրող դատախազի կողմից<sup>12</sup>: Նշված անհեթեթ իրավիճակը մեր կարծիքով ևս հանդիսանում է դատավարական ֆորմալիզմի բացասական հետևանք:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեխնիկական միջոցների օգտագործումը լայն հնարավորություններ է ստեղծում քրեադատավարական իրավահարաբերությունների պարզեցման և քրեական արդարադատության մատչելիության մակարդակի բարձրացման համար: Հատկանշական է, որ ուսումնասիրությունների համաձայն՝ քրեադատավարական իրավահարաբերություններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացում հիմնական շեշտը դրվում է էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային համակարգերի (ծրագրերի) շահագործման վրա:

Այսպես օրինակ, Էստոնիայի Հանրապետությունը հաճախ անվանում են թվային կամ էլեկտրոնային հանրապետություն: Նշվածը պայմանավորված է պետության գործունեության բոլոր ճյուղերում, այդ թվում նաև իրավական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բարձր աստիճանով:

Ի թիվս այլնի, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի իրավադրույթները սահմա-

նում են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության վերաբերյալ մի շարք կարգավորումներ: Այսպես, քրեադատավարական իրավահարաբերությունների պարզեցման նպատակով ստեղծվել է «e-toimik» էլեկտրոնային ծրագիրը, որի շահագործումը պարտադիր պահանջ է, և որը հետապնդում է թրթռյալ փաստաթղթաշրջանառությունից դեպի էլեկտրոնայինի անցում կատարելու նպատակ:

Այսպես, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ էլեկտրոնային քրեական գործի շրջանակներում գործողություններ կատարելու նպատակով գործող տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ «e-toimik») պետական տեղեկատվական համակարգի մեջ ներառված և քրեական վարույթի շրջանակներում դատավարական և անհատական տվյալների մշակման նպատակով շահագործվող տվյալների շտեմարան է:

Նույն օրենսգրքի 1601-րդ հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ քրեական գործի անգամ դատական քննությունը կարող է մասամբ կամ ամբողջությամբ իրականացվել էլեկտրոնային-թվային ձևով:

Հատկանշական է նաև, որ «e-toimik» էլեկտրոնային ծրագիրը իր մեջ պարունակում է քրեական գործի բոլոր նյութերը և այն դատարան ներկայացնելուց հետո քննարկվող էլեկտրոնային ծրագրին հասանելիություն է ստանում նաև պաշտպանության կողմը: Դատավարության կողմերը նույն ծրագրի միջոցով հնարավորություն են ունենում ներկայացնելու միջնորդություններ, բողոքներ և այլ դատավարական փաստաթղթեր էլեկտրոնային տարբերակով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են հատուկ դատարաններ ստեղծելու միտումներ, որոնցում գործերի քննությունը ընդհանրապես իրականացվում է առցանց ռեժիմում:

Այսպես, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում 2017 թվականին ստեղծվել է հատուկ մասնագիտացմամբ դատարան, որը իրավասու է քննելու այն բոլոր վեճերը, որոնք կապված են համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հետ: Նշված դատարանի և դրա գործունեության յուրահատկությունը կայանում է նրանում, որ դրա գործունեությունը իրականացվում է իրական ժամանակի ռեժիմում առցանց տեսակապի միջոցով, այսինքն՝ դատավարության կողմերը ֆիզիկապես չեն ներկայանում դատարան, այլ ընդամենը տեխնիկական միջոցներով տեսակապ են հաստատում դատարանի և դատավարության այլ մասնակիցների հետ, իսկ դատավարա-

կան փաստաթղթերը ներկայացվում են դատարան էլեկտրոնային տարբերակով գործող տեղեկատվական համակարգերի միջոցով:

Դատական իշխանության բարեփոխման նմանօրինակ հաջողված փորձ է արվել նաև Կանադայում, ուր ստեղծվել է քաղաքացիական վեճերի կարգավորման տրիբունալ: Նշված տրիբունալի յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն գործում է համացանցում ստեղծված համապատասխան կայքէջի միջոցով: Տրիբունալի կայքէջը հնարավորություն է ընձեռում համացանցին հասանելիություն ունենալու դեպքում բուլլինգի ընթացքում բեռնել դատավարական փաստաթղթերի անհրաժեշտ փաթեթը և ներկայացնել հայցադիմում, ինչպես նաև հայցադիմումի պատասխան, այլ դատավարական փաստաթղթեր, առցանց հետևել քաղաքացիական գործի ընթացքին և մասնակցել դատավարությանը :

Հատկանշական է, որ թեև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի նախատեսում քրեական գործերի քննության վերը նկարագրված հատուկ տարբերակներին համահունչ կարգավորումներ, այնուամենայնիվ հայրենական իրավակիրառ պրակտիկան այդ ուղղությամբ որոշակի միտումներ է արձանագրել: Այսպես, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) նախագահի 2016 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում, Երևան քաղաքի քննչական վարչությունում և դրա տարածքային ստորաբաժանումներում (Էլեկտրոնային նախաքննություն) փորձարարական ծրագիրը ներդնելու մասին» թիվ 44-Լ հրամանով, Կոմիտեի նշված ստորաբաժանումներում ներդրվել է (Էլեկտրոնային նախաքննություն) ծրագիրը: Նշված ծրագիրը ներդրվել է քրեական գործերով միասնական և առցանց հաշվառում իրականացնելու նպատակով: Իսկ արդեն, 2017 թվականի ապրիլի 10-ին Կոմիտեի նախագահի թիվ 66-Լ հրամանով նշված (Էլեկտրոնային նախաքննություն) ծրագիրը ներդրվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող բոլոր մարմիններում և ստորաբաժանումներում: Նշվածը թերևս կարելի է գնահատել, որպես (Էլեկտրոնային նախաքննություն) ծրագրի փորձարկման դրական արդյունքի հետևանք:

Ավելին, Կոմիտեի նախագահի հանձնարարականի համաձայն՝ Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմինների և ստորաբաժանումների քննիչները 2018 թվականի հունվարի 1-ից

հետո հարուցված քրեական գործերով քրեական գործ հարուցելու, վարույթ ընդունելու, որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական գործով վարույթը կասեցնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումները և մեղադրական եզրակացությունները պետք է կազմեն «Էլեկտրոնային նախաքննություն» ծրագրի միջոցով:

Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ուղղակիորեն չի ամրագրում տեղեկատվական տեխնոլոգիաների, ծրագրերի, համացանցի օգտագործման անհրաժեշտությունը քրեադատավարական իրավահարաբերությունների պարզեցման նպատակով, կարծում ենք, որ ենթաօրենսդրական մեջբերված ակտերի առկայությունը համապատասխան օրենսդրական լրացումների անհրաժեշտության վառ հիմնավորում է:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ առկա է արտասահմանյան հիշատակված երկրների փորձի օրինակը իրականացնել օրենսդրական բարեփոխումների ծրագիր դատավարական ձևի պարզեցման ուղղությամբ: Մասնավորապես, կարծում ենք, որ անհրաժեշտ է վերացնել դատավարական ֆորմալիզմի դրսևորում հանդիսացող այն կարգավորումները, որոնց հիման վրա թղթային քրեական գործը շարունակում է մնալ քրեական դատավարության նյութական սուբստրատի մենաշնորհային դիրքում և հնարավորություն ընձեռել քրեական դատավարության մասնակիցներին օգտագործել տեխնիկական այն բոլոր հնարավորությունները, որոնք արդարադատության իրականացման գործընթացը կարող են դարձնել առավել մատչելի և ժամանակակից:

- <sup>1</sup> ՏԻ՛ւ, Юридическая процессуальная форма: теория и практика / Под ред. Горшенев В.М., Недбайло П.Е. - М., «Юрид. лит.», 1976. С. 14.
- <sup>2</sup> ՏԻ՛ւ, Галкин Б. А. Советский уголовно-процессуальный закон. М., Госюриздат, 1962, С. 52.
- <sup>3</sup> ՏԻ՛ւ, Лобойко Л.М. Кримінально - процесуальне право: Курс лекцій: Навч. посібник. - К.; Істина, 2008. С. 19.
- <sup>4</sup> ՏԻ՛ւ, Уголовно-процессуальное право Украины: Учебник. Под общей редакцией доктора юридических наук, профессора Ю. П. Аленина. Х.: «Одиссей». 2009. С.29.
- <sup>5</sup> ՏԻ՛ւ, Трофименко В.М. Процессуальная форма: сущность и значение в уголовном судопроизводстве. (<https://cyberleninka.ru/article/v/protseessualnaya-forma-suschnost-i-znachenie-v-ugolovnom-sudoproizvodstve-1>) (03.02.2018)
- <sup>6</sup> ՏԻ՛ւ, Рахунов Р.Д. Дифференциация уголовно-процессуальной формы по делам о малозначительных преступлениях. // Советское государство и право. 1975. N 12. С.10.
- <sup>7</sup> ՏԻ՛ւ, Трофименко В.М. Процессуальная форма: сущность и значение в уголовном судопроизводстве. (<https://cyberleninka.ru/article/v/protseessualnaya-forma-suschnost-i-znachenie-v-ugolovnom-sudoproizvodstve-1>) (03.02.2018).
- <sup>8</sup> ՏԻ՛ւ, Бержель Ж- Л. Общая теория права / Под. общ. ред. В.И. Даниленко / Пер. с фр. - М.: Издательский дом NOTA BENE 2000. С.565.
- <sup>9</sup> ՏԻ՛ւ, Учебник гражданского процесса. Е.В.Васьковский. М.: 1917г. (<http://www.allpravo.ru/library/doc2472p0/instrum4301/item4324.html>) (03.02.2018).
- <sup>10</sup> ՏԻ՛ւ, Курс уголовного процесса. Под ред. Л.В. Головки. М.: Статут, 2016. С. 41-42.
- <sup>11</sup> ՏԻ՛ւ, Лазарева В. А. Доказывание в уголовном процессе: учебник для бакалавриата и магистратуры. 2-е изд., перераб. и доп. М. : Изд. Юрайт, 2011. С. 58, 61.
- <sup>12</sup> ՏԻ՛ւ, Аппарат власти следственной/ Под общ.ред. Н.А. Колокова. - М.: Юрлитинформ, 2016. С.204.
- <sup>13</sup> ՏԻ՛ւ, <https://civilresolutionbc.ca/> (04.02.2018).

*ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ*

1. Юридическая процессуальная форма: теория и практика / Под ред. Горшенев В.М., Недбайло П.Е. - М., «Юрид. лит.», 1976.
2. Галкин Б. А. Советский уголовно-процессуальный закон. М., Госюриздат, 1962.
3. Лобойко Л.М. Кримінально - процесуальне право: Курс лекцій: Навч. посібник. -К.; Істина, 2008.
4. Уголовно-процессуальное право Украины: Учебник. Под общей редакцией доктора юридических наук, профессора Ю. П. Аленина. Х.: «Одиссей». 2009.
5. Трофименко В.М. Процессуальная форма: сущность и значение в уголовном судопроизводстве. (<https://cyberleninka.ru/article/v/protseessualnaya-forma-suschnost-i-znachenie-v-ugolovnom-sudoproizvodstve-1>)
6. Рахунов Р.Д. Дифференциация уголовно-процессуальной формы по делам о малозначительных преступлениях. // Советское государство и право. 1975. N 12.
7. Бержель Ж- Л. Общая теория права / Под. общ. ред. В.И. Даниленко / Пер. с фр. - М.: Издательский дом NOTA BENE 2000.
8. Учебник гражданского процесса. Е.В.Васьковский. М.: 1917г. (<http://www.allpravo.ru/library/doc2472p0/instrum4301/item4324.html>) (03.02.2018).
9. Курс уголовного процесса. Под ред. Л.В. Головки. М.: Статут, 2016.
10. Лазарева В. А. Доказывание в уголовном процессе: учебник для бакалавриата и магистратуры. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2011.
11. Аппарат власти следственной/ Под общ.ред. Н.А.Колокова. - М.: Юрлитинформ, 2016.

Зорайр Арутюнян

Соискатель кафедры уголовного и уголовно-процессуального  
права института права и политики РАУ,  
адвокат,

РЕЗЮМЕ

*Упрощение уголовно-процессуальной формы в информационном обществе*

Формирование информационного общества имеет свое воздействие на все общественные отношения, в том числе и на уголовно-процессуальные правоотношения. Упрощение уголовно-процессуальной формы в контексте развития и широкого применения информационных технологий становится необходимым для борьбы против укоренения процессуального формализма. В рамках данной научной статьи будут рассмотрены проблемные вопросы относительно упрощения уголовно-процессуальной формы в информационном обществе. В объеме данной работы включен анализ опыта иностранных государств и тенденций, нашедших место в армянской правоприменительной практике.

*Ключевые слова: процессуальная форма, процессуальный формализм, информационные технологии.*

Zorayr Harutyunyan

Applicant of the Department of the Criminal and Criminal  
Procedural Law of the Institute of Law and Politics RAU,  
Advocate,

SUMMARY

*Simplification of the criminal procedural form in the information society*

Formation of informative society has its impact on all social relations including criminal procedural legal relations. Simplification of the criminal procedural form in context of development and implementation of informative technologies is a necessity for the fight against procedural formalism rooting. In the current scientific article the main issues relating to simplification process of the criminal procedure in the informative society will be discussed. Analysis of the experience of foreign countries and tendencies of Armenian legal practice is also presented in the work.

*Key words: procedural form, procedural formalism, informative technologies.*